ՆԱՐԵԿԱՑԻ ԱՐՎԵՍՏԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

ՔՈ ԿԱՊԸ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀԵՏ

NAREGATSI ART INSTITUTE

YOUR CULTURE CONNECTION

Սիրով ձեզ ենք ներկայացնում 2024 թվականի ընթացքում «Նարեկացի» արվեստի միության (ՆԱՄ) գործունեության կարևոր իրադարձությունների ամփոփ նկարագիրը:

2024 թվականի ընթացքում տեղի է ունեցել 132 միջոցառում, որոնցից ուշագրավները՝ ստորև.

We are pleased to present to you a summary of the important events of the Naregatsi Art Institute (NAI) implemented throughout 2024.

132 events took place in 2024, the most notable of which are listed below:





ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ՏԱՐԻ. «Նարեկացի» արվեստի միության 20-ամյակ

https://shorturl.at/EnUeg

Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը՝ լեփ-լեցուն դահլիճում, տեղի ունեցավ «Նարեկացի» արվեստի միության 20-ամյա գործունեությանը նվիրված ցուցահանդես և համերգ՝ «20-ամյա վերելք» խորագրով:

Ողջույնի իր խոսքում «Նարեկացի» արվեստի միության հիմնադիր Նարեկ Հարությունյանը շնորհակալություն հայտնեց բոլորին, որոնք 20 երկար ու ձիգ տարիներ միության կողքին են եղել, որոնց միջոցով կյանքի են կոչվել բազմաթիվ կարևոր մշակութային ծրագրեր:

«Յուրաքանչյուր հայ ունի առաքելություն և պարտավորություն. ծառայել Աստծուն և հայրենիքին, դրանից կարևոր և առաջնային ոչինչ չկա»,- ընդգծեց ՆԱՄ հիմնադիրը:





Jubilee year: NAI -20

https://shorturl.at/kqSkG

Naregatsi Art Institute marked its 20th anniversary in Komitas Chamber Music Hall within the framework of a beautiful concert program and an exhibition entitled “20-year Ascent”.

In his welcoming speech, Nareg Hartounian, the Naregatsi Art Institute founder, thanked everyone who has been with the Institute for 20 long and hard years, through which many important cultural projects have been implemented.

"Every Armenian has a mission and obligation to serve God and the motherland, there is nothing more important and primary than that" emphasized the NAI founder.





ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ / PUBLICATIONS

ԱՐՑԱԽԸ ԿԱՆՉՈՒՄ Է

«Նարեկացի» արվեստի միության 2024թ.-ի հրատարակությունն է, որտեղ ընդգրկված են երաժշտագետ-բանահավաքների կողմից ավելի քան մեկդարյա ժամանակահատվածում գրի առնված Արցախի ժողովրդական երգաստեղծության տարբեր ժանրերի՝ երկրագործական (հորովելներ), կանանց աշխատանքային (առտնին), ծիսական (հարսանեկան), պարերգեր և քնարական երգեր: Բացի ավանդական ֆոլկլորից ալբոմում տեղ են գտել նաև ժողովրդական երգամտածողությամբ առանձնացող հեղինակային երգեր, որոնք մեծ ճանաչում և սեր են վայելել արցախահայության լայն շրջանակներում:

https://linkcuts.com/9ksu28n8

The album "Artsakh Beckons"

The current album contains various genres of Artsakh folk songwriting written by musicologists-compilers over a period of more than a century: fieldwork (horovels), women’s work (domes tic), ritual (wedding) songs, dance and lyrical songs. In addition to traditional folklore, below are also presented original songs, distinguished by folk singing, which have gained great recognition and love in the broad circles of Artsakh Armenians.

https://shorturl.at/ruE4t

ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍՆԵՐ / EXHIBITIONS



- Արցախցի գեղանկարիչ Սամվել Թավադյանի՝ «Հիշողության ուժը» խորագրով ցուցահանդես http://surl.li/qgzffu

Artsakh artist Samvel Tavadyan’s exhibition entitled "The Power of Memory" https://shorturl.at/Fvm8P



- Ռոբերտ Ասկարյանի՝ «Ճանապարհ» խորագրով ցուցահանդես https://shorturl.at/MZeTx

Արցախյան ազատամարտին են նվիրված «Խաչելության ճանապարհով» յուղանկարը, «Հույս, սեր, հավատ» և «Խաչ կրողը» հուշարձանները:

Robert Askarian's exhibition entitled "The Road". https://shorturl.at/Yg4Aq

The oil painting "Crucification", the monuments "Hope, Love, Faith" and "Cross Bearer" are dedicated to the Artsakh Liberation War.



- Լյովա Սամվելյանի՝ «Հոգու ալիքներ» խորագրով ցուցահանդես https://shorturl.at/ys3BX

84-ամյա Լյովա Սամվելյանի ձեռակերտ աշխատանքները պատրաստված են ծառի արմատներից, ճյուղերից, եղևնու կոներից, փշերից, քարերից և տարատեսակ այլ նյութերից:

Lyova Samvelyan’s exhibition entitled "Inner World of a Person". https://shorturl.at/hMW87

84 years old Lyova Samvelyan's handmade works are made of tree roots, branches, fir cones, thorns, stones, and various other materials.



ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ
CULTURAL EXCHANGE

■ Դարյա Կալայի (Իրան)՝ «Կյանքի վրձնահարվածները» խորագրով ցուցահանդես https://shorturl.at/lofjX

Darya Kalaei's (Iran) exhibition entitled "Brushstrokes of Life". https://shorturl.at/FPyx6

■ Հրայր Բազէ Խաչերեանի՝ «Խաչքար» (Արվեստ և Հոգի. տեսողական ճամփորդություն) գրքի շնորհանդես. https://rb.gy/nv5pz5
Գրքում ամփոփվել են Հայաստանի և Արցախի, նաև՝ Արևմտյան Հայաստանի, Նախիջևանի, Վրաստանի, Իրանի, Երուսաղեմի, Սանկտ Պետերբուրգի և այլ շրջանների խաչքարերի լուսանկարներ:

Presentation of Hrair Hawk Khatcherian’s book “Khatchkar: Art & Soul. A Visual Journey”. https://shorturl.at/1CWjz
The book includes photos of the khatchkars from Artsakh, Armenia, Georgia, Iran, Nakhijevan, Western Armenia, Jerusalem, St Petersburg and other regions.

■ «Բարոկկո և XX դար» խորագրով համերգ https://shorturl.at/PgFwH
Մասնակիցներ՝ Մաքսիմ Ռիժով (բալթյան ցիտրա), Դենիս Միլլեր դաշնամուր)

Concert entitled "Baroque and the 20th Century". https://shorturl.at/RSDA1
Participants: Maksim Ryzhov, (Baltic zither), Denis Miller (piano)

■ «Ֆլեյտայի կամուրջներ» խորագրով համերգ http://surl.li/spovef
Մասնակիցներ՝ Վասիլիսա Մելնիկովա (Մոսկվա), Յան Շոմով (Մինսկ), Գայանե Ենոքյան (Երևան), էլեն Մարտիրոսյան (Երևան), Անի Սեդոյան (Երևան), Ավետիս էսկենյան (Երևան):

Concert entitled "Flute Bridges". https://shorturl.at/AmFfV
Participants: Vasilisa Melnikova (flute, Moscow), Gayane Yenokyan (flute, Yerevan), Yan Shomov (flute, Minsk), Elen Martirosyan (flute, Yerevan), Ani Sedoyan (flute, Yerevan), Avetis Eskenyan (flute, Yerevan).

■ Ֆրանսիաբնակ կինոռեժիսոր Նարե Թադևոսյանի «Սպիտակ Վահան» ֆիլմի ցուցադրություն http://surl.li/duubbo
Ֆրանսիահայ բժիշկ Լևոն Խաչատրյանի ղեկավարած բժիշկների խումբը պատերազմի օրերին և ավարտին ժամանեց Հայաստան և Արցախ՝ օգնության ձեռք մեկնելու Ադրբեջանի կողմից սանձազերծված պատերազմում վիրավորում ստացած զինվորներին:

Screening of the film "White Shield" by the French filmmaker Nare Tadevosyan https://rb.gy/y48xus
A group of doctors led by Levon Khachatryan, a French-Armenian doctor, arrived in Armenia and Artsakh during the war days and at the end of the war to lend a helping hand to the soldiers who were injured during the war unleashed by Azerbaijan.

■ Լիլյա Նիաուրի ՝ «Ամեն ինչ իր տեղում» խորագրով ցուցահանդես http://surl.li/hedgzc

Exhibition entitled "Everything in its Place" by Lilia Niauri. https://rb.gy/mo9vbh

■ Դասական երաժշտության համերգ http://surl.li/dhnlzi
Լոնդոնի Ռոյալ ակադեմիայի, Մոսկվայի Չայկովսկու անվան կոնսերվատորիայի ուսանողներ Պոլինա Շարաֆյանը (ջութակ), Նիկիտա Դեմիդենկոն (դաշնամուր) և Լանա Ադլեյբան (դաշնամուր) հանդես եկան համատեղ համերգային ծրագրով:

Classical music concert https://rb.gy/pcihva
The students of the London Royal Academy and Moscow Tchaikovsky Conservatory Polina Sharafyan (violin), Nikita Demidenko (piano), Lana Adleyba (piano) presented a joint concert program:

■ Անդրեյ Զագոսկինի՝ «Շնորհակալություն, Հայաստան» խորագրով գեղանկարների ցուցահանդես http://surl.li/ltmbzh

Andrey Zagoskin's exhibition entitled "Thank you, Armenia". https://rb.gy/qsovmm

■ «Ես՝ քեզ նման» (ԱՄՆ) խաղարկային ֆիլմի ցուցադրություն
Ռեժիսոր՝ Հայկ Քոչարյան http://surl.li/isczpk

Screening of the feature film "I'm Like You". Director: Haik Kocharian http://surl.li/mpqern

■ Հորդանանահայ կինովավերագրող ռեժիսոր Սարին Հայրապետյանի «Տունս քաղցր ա» (ԱՄՆ, Ֆրանսիա, Իռլանդիա, Հորդանան, Հայաստան) վավերագրական ֆիլմի ցուցադրություն http://surl.li/konxqp
Ֆիլմը անդրադարձել է Արցախյան պատերազմին և նկարագրում է ռազմական հակամարտությունների համատեքստում և անվտանգության մշտական սպառնալիքի տակ երեխաների մեծանալու դժվարությունները:

Screening of the documentary film “My Sweet Land" (USA, France. Ireland, Jordan, Armenia).
Director: Sareen Hairabedian (from Jordan) http://surl.li/hsqeak
The film touched on the Artsakh war and described the difficulties of children growing up in the context of military conflicts and under constant security threats.

ՁԵՌՔ ՁԵՌՔԻ՝ ՀԱՇՄԱՆԴԱՍՏՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԵՏ

HAND IN HAND WITH THE PHYSICALLY CHALLENGED



■ «Մենք Կարող ենք» հասարակական կազմակերպության սաների՝ «Աշխարհն իմ աչքերով» լուսանկարչական աշխատանքների ցուցահանդես http://surl.li/rtrqgs

Exhibition "The World Through My Eyes" by the students of the "We Can" NGO. https://bitly.cx/jKvlQ

■ «Նորք» շուրջօրյա խնամքի կենտրոնի տարեցների «Տարմանի» սիրողական թատերախմբի «Օրը մթնեց» գրական-երաժշտական ներկայացում՝ նվիրված Համո Սահյանի ծննդյան 110-ամյակին: http://surl.li/avifxq

The literary-musical performance "It’s Getting Dark" by Tarmani Amateur Troupe of the Nork 24-hour Care Center for the Elderly, dedicated to Hamo Sahyan's 110th anniversary. https://bitly.cx/RKiFf

■ «Ռոտոնդա» թատերախմբի «Ակամա դերասանը» թատերական ներկայացում՝ նվիրված Ամենայն հայոց բանաստեղծ Հովհաննես Թումանյանի 155 և հայ բեմի մեծագույն ողբերգակ Պետրոս Ադամյանի 175-ամյակներին: http://surl.li/nbzyjs

"The Reluctant Actor" theatrical performance by the Rotonda Theater Group dedicated to the 155th anniversary of the All-Armenian poet Hovhannes Tumanyan and the 175th anniversary of the greatest tragedian of the Armenian stage, Petros Adamyan. https://bitly.cx/Do0r

■ Վոկալ երաժշտության երեկո https://shorturl.at/TGtXM
Մասնակիցներ՝ Դմիտրի Կորոստիլյով (բարիտոն, Ռուսաստան), Ալվինա Տիգրանյան (սոպրանո), Վասիլի Ռոլիչ (դաշնամուր)

Evening of vocal music https://shorturl.at/PIvRp
Participants: Alvina Tigranyan: soprano, Dmitry Korostylev: baritone, Vassily Rolich: piano

ՆԱՍ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԽՄԲԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

ACTIVITY OF NAREGATSI ART INSTITUTE ARTISTIC GROUPS



«Քնար» հոգևոր և ժողովրդական երգերի խմբի «Աստծո սիրո և ողորմության խորհուրդն է հսկում աշխարհը» խորագրով համերգ http://surl.li/woimsd

Christmas concert by the Knar Spiritual and Folk Songs Group entitled "The Mystery of God's Love and Mercy Guards the World". https://bitly.cx/RmD35



ՆԱՄ Շուշիի կենտրոնին նվիրված միջոցառում http://surl.li/mjqieu
Համերգային ծրագրի ընթացքում կատարումներով հանդես եկան «Նարեկացի» նվագախումբը (գեղարվեստական ղեկավար՝ Արտեմ Խաչատուր) և «Քնար» հոգևոր և ժողովրդական երգերի խումբը (գեղարվեստական ղեկավար՝ Լուսին Վանես):

Event dedicated to Naregatsi Art Institute Shoushi Center. https://bitly.cx/ms2bQ
The concert program featured the Naregatsi Orchestra (Artistic Director: Artem Khachatur) and the Knar Spiritual and Folk Songs Group (Artistic Director: Lusin Vanes).



Համերգ՝ նվիրված Կոմիտաս Վարդապետի 155-ամյակին https://shorturl.at/HjgUk
Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը տեղի ունեցավ համերգային երեկո «Նովա» ժողովրդական նվագարանների անսամբլի (գեղարվեստական ղեկավար և դիրիժոր՝ Հելբերտ Ասատրյան) և հրավիրյալ երաժիշտներ Դանիել Դեքերի (ԱՄՆ),
Հասմիկ Բաղդասարյան-Դոլուխանյանի (սոպրանո), Ավագ Մարգարյանի (բլուլ), Գրիգոր Առաքելյանի (հայկական վիոլա), Արտակ Ասատրյանի (դուդուկ) մասնակցությամբ:

Concert at Chamber Music Hall https://bitly.cx/lg9T
The Nova Folk Instruments Ensemble (Artistic Director and Conductor: Helbert Asatryan) and invited soloists presented a concert dedicated to the 155th anniversary of Komitas Vardapet in the packed hall of the Komitas Chamber Music Hall.
Invited soloists: Singer and musician Daniel Decker from the United States, Hasmik Baghdasaryan Dolukhanyan (soloist), Avag Margaryan (blul), Grigor Arakelian (Armenian viola), Artak Asatryan (duduk).



«Նարեկացի» արվեստի միության նկարչության մանկական դասարանի «Շնորհների ծիածան» խորագրով ցուցահանդես http://surl.li/pyhkba

Exhibition "Rainbow of Blessings" of the Naregatsi Art Institute Painting Class for children https://bitly.cx/M6R76



«Ռոտոնդա» թատերախմբի (ղեկավար՝ Մարինե Ասատրյան) «Սուրբ Ծննդյան հրաշքը» թատերական ներկայացում http://surl.li/beidis

"The Miracle of Christmas" by the Rotonda Theater Group https://bitly.cx/LASh

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ՀԵՏ

COLLABORATION WITH ARMENIAN CULTURAL CENTERS



ԵՐԵՎԱՆԻ ԿՈՄԻՏԱՍԻ ԱՆՎԱՆ ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱՅԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ
GYUMRI BRANCH OF YEREVAN KOMITAS STATE CONSERVATORY

«ժամանակակից կոմպոզիտորները և կատարողները Գյումրիում» միջոցառումների շարք.
"Contemporary Composers and Performers in Gyumri" series of events.

- Համերգ-հանդիպում «Նարեկացի» նվագախմբի հետ

Concert-meeting with Naregatsi Orchestra http://surl.li/mupysv

- Վարպետաց դաս ջութակահար Սուրեն Հախնազարյանի հետ

Masterclass with violinist Souren Hakhnazaryan http://surl.li/vjcwur

- Հանդիպում օպերային երգիչ Բարսեղ Թումանյանի հետ

Meeting with opera singer Barsegh Toumanian http://surl.li/syutwf



ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ԵՎ ՀԲԸՄ ՆՈՐՔԻ ՀԱՅՈՐԴՅԱՑ ՏՈՒՆ

«Շողակաթ» մանկական երգչախմբի համերգ (խմբավար՝ Կարինե Եզեկյան, դաշնակահար՝ Գայանե Ներսիսյան) https://shorturl.at/u4BIK

MOTHER SEE OF HOLY ETCHMIADZIN AND AGBU NORK HAYORDATS TUN.

Concert of Shoghakat Children's Choir (Conductor: Karine Yezekyan Accompaniment by Gayane Nersisyan) https://shorturl.at/79Go0



ՀՐԱԶԴԱՆ ՔԱՂԱՔԻ ԵՐՎԱՆԴ ՔՈՉԱՐԻ ԱՆՎԱՆ ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ

Դպրոցի սաների հաշվետու համերգ և ցուցահանդես ՆԱՄ-ում https://shorturl.at/w3xpi

YERVAND KOCHAR ART SCHOOL IN HRAZDAN.

Concert and exhibition of the School students https://shorturl.at/MXJoX

ՄԱՐԶԱՅԻՆ ՄՇԱԿՈՒՅԹ
REGIONAL CULTURE



«Նովա» ժողովրդական նվագարանների անսամբլի համերգ՝ Դսեղի մշակույթի տանը
http://surl.li/yjuoew

The Nova Folk Instruments Ensemble Concert at the Dsegh House of Culture. https://bitly.cx/TRHYh



Աշտարակի «Սուրբ Մարիանե» և Սաղմոսավանի «Հայորդաց տուն» սոցիալական կենտրոնների սաների՝ «Արվեստի գույները» խորագրով ցուցահանդես-ներկայացում https://shorturl.at/rbfG0

Exhibition - performance entitled “Colors of Art” by the students of the Ashtarak “St. Marianne” and Saghmosavan “Hayordats Tun” Social Centers. https://shorturl.at/BCCyA

ՀԱՏՈՒԿ ՆԱԽԱԳԾԵՐ, ՓԱՌԱՏՈՆԵՐ

SPECIAL PROJECTS, FESTIVALS



ԱՎԱԳ ՇԱԲԱԹՎԱ ԽՈՐՀՐԴՈՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՇԱՐՔ https://shorturl.at/3PK6M
HOLY WEEK EVENTS SERIES https://shorturl.at/7g0Gm

■ Հասմիկ Բեգոյանի՝ «Ոգեշնչում» խորագրով մանրանկարչական աշխատանքների ցուցահանդես http://surl.li/gvisai
Hasmik Begoyan's exhibition of miniature works entitled "Inspiration" http://surl.li/fmmhgb

■ «Նաիրյան» վոկալ անսամբլի համերգ http://surl.li/vzatxy
Concert of the Nairyan Vocal Ensemble http://surl.li/prcpcj

■ «Քնար» հոգևոր և ժողովրդական երգերի խմբի համերգ http://surl.li/srxycs
Concert of the Knar Spiritual and Folk Songs Group https://bitly.cx/nx2Z



«Ոգեկոչում արվեստի շնչով» ամենամյա միջոցառում՝ նվիրված Հայոց ցեղասպանության անմեղ զոհերի հիշատակին https://shorturl.at/MGICX

"Commemoration through the Spirit of the Arts" dedicated to the innocent victims of the Armenian Genocide. https://bitly.cx/Jgxc











Համերգ ՔՈԱՖ ՍՄԱՐԹ կենտրոնում https://shorturl.at/QNvgZ

«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի (ՔՈԱՖ) ՍՄԱՐԹ կենտրոնում «Նովա» ժողովրդական նվագարանների անսամբլը (գեղարվեստական ղեկավար և դիրիժոր՝ Հելբերտ Ասատրյան) հանդես եկավ «Ճանապարհն անհունի» խորագիրը կրող համերգային ծրագրով՝ նվիրված Հովհաննես Թումանյանի և Կոմիտաս Վարդապետի ծննդյան 155-ամյակին:

The Nova Folk Instruments Ensemble (Artistic Director and Conductor: Helbert Asatryan) presented a concert program entitled "The Road to Infinity..." at the COAF SMART Center. The jubilee concert is dedicated to the 155th birthday anniversary of Hovhannes Tumanyan and Komitas Vardapet. https://shorturl.at/kNC2I



«Ռոլան -20» մանկապատանեկան ֆիլմերի միջազգային փառատոն http://surl.li/pztnec
20th “Rolan” International Film Festival for Children and Youth. https://bitly.cx/Ziri



ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՄԱՍԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՇԱՐՔ
DISCOURSE ABOUT TUMANYAN EVENTS SERIES

- «Արտավազդ 130. Հովհաննես Թումանյանի բանաստեղծ որդին» դասախոսություն http://surl.li/cvthtv

"Artavazd 130: The poet son of Hovhannes Tumanyan" http://surl.li/zjstjh

- Զրույց-դասախոսություն «Նոր տարվա և Սուրբ Ծննդյան խորհուրդը Թումանյան ընտանիքում» http://surl.li/xejloa

Discourse-lecture “The New Year and Christmas in the Tumanyan family” https://shorturl.at/43dN2



«Մեր պարերը և մենք» ազգային պարի բաց դաս https://sh orturl.at/oXgtY
Յուրաքանչյուր ամսվա վերջին ուրբաթ օրը «Կարին» ավանդական երգի-պարի խմբի մասնակցությամբ տեղի է ունենում ազգային պարի բաց դաս՝ ազդարարելով «Կարին» խմբի հիմնադիր, ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ Գագիկ Գինոսյանի և «Նարեկացի» արվեստի միության կողմից դեռևս 2005 թվականին ստեղծված ավանդույթը շարունակական է:

We & Our Dances open national dance class http://surl.li/ydnpwo
On the last Friday of every month, an open national dance class is held with the participation of the "Karin" traditional song and dance group continuing the traditions established in 2005 created by Gagik Ginosyan, Karin Traditional Song & Dance Ensemble Artistic Director, RA Honorary Worker of Culture.

YOU CAN FOLLOW US ON FACEBOOK AND INSTAGRAM TO SEE MORE.

www.naregatsi.org

Join us in making a difference

DONATE

16/1 Vardanants,Yerevan, Armenia I (010) 58 01 05